աջ և ձախ ձեռներով բռնած՝ ղեկավարում է գործիքը։ Մաճի հիմքի մոտ առատամին միանում է երկար բազուկը, որը շարժական է, կարող է մի փոքր բարձրանալ և իջնել՝ լայնացնելով կամ նեղացնելով առատամի հետ կազմող անկյունը, նայելով, թե որքան խորը պիտի ակոսի խոփը։ Մեկ անգամ սարքված անկյունը անփոփոխ պահելու համար առատամի վրա, առատամի երկու՝ սուր և բութ ծայրերից հավասար հեռավորությամբ կանգնեցրած է թուրը՝ որոշ բարձրության վրա փորած ծակերով։ Այս ծակերի մեջ անց են կացվում թրի գալանէր՝ փոքրիկ ձողիկներ, բազուկը ցանկալի բարձրության վրա ամրացնելու համար։ Բազուկի միջի մասում քառանկյունի նեղ ծակը՝ պօռտի տէղը կտրված է նրա համար, որ մեջը ամրացվի այդ ծակի հաստությանը համապատասխանող փայտե կտորը՝ պօռտը, իսկ ծայրին ավելի մոտ կտրված են երկու կօրծավարի ծակէրը, որոնք կօրծավար կոչվող փայտիկներ անցկացնելու համար են։ Մաճի հիմքում առատամի վրա բազուկի տակ, դեպի աջ և ձախ, շեղ ամրացված են անգաճնէր։ Կօրծավարի վրա ձգվում է փայտե օղակ՝ բօսա[4]։ Նրա օգնությամբ կաշվե ջօլավ՝ փոկով ամրացվում է առաջին զույգ եզների լուծը։ Պօռտի տէղից կապվում է երկաթե շղթան, երկար զինջիլը, որից քաշում են երկրորդ և երրորդ լուծ եզները։ Ալաքին երբեմն լծվում են առջևից նաև չորրորդ զույգ եզներ։ Առաջին զույգ եզները կոչվում են ամբուլ կամ ամբլայէզներ[5]. երկրորդը՝ ուսածէրf, միջի յէզները կամ միջի ջուխտյէզները, երրորդը՝ առաջիկ կամ բոշնայէզներ. չորրորդը՝ մրդրատօն կամ մարթտակ։ Սովորաբար լծվում են երեք զույգ[6]։ Եզները լծած, կազմ ու պատրաստ արորը կոչվում է վէսկի[7], մի բառ, որը ոմանք համարում են վէցկի, այսինքն վեց եզը լծած արորի բառի աղավաղում։

Մաճկալին Բեխ գյուղում ասում են ռաշպար։ Եզներ քշողը հօտաղ է, թփեր հեռացնողը՝ fօլ անող, թօխրայով մեծ ճումերն ու խոստակները ջարդողը՝ թօխրատու։

Քանի որ ոչ ոք չէր ունենում և՛ արոր, և՛ անհրաժեշտ թվով լծկան, մի քանի հողատերեր միանում էին արորով ու եզներով և ամբողջ վարի ժամանակաշրջանում դառնում էին վէսկի-ճրնգէրնէր։ Այդ ճրակաշրջան[8] կամ ճրրկշվէի[9] ժամանակամիջոցը բաժանվում էր մասնակիցների միջև ըստ նրանց եզների թվի, արորը հաշվելով մի եզը[10]։ Եզ չունեցողը դառնում էր ճրպօտ հօտաղ, որը մեծ մասամբ զբաղված էր լինում վարը թոխրելով։ Բանվորները կերակրվում էին վարի ժամանակ այն մասնակցի հաշվին, ում հողաբաժինը վարում էին։ Տոն օրերին կերակրվում էին իրենց հաշվին, իսկ գիշերվա հովիվը՝ խոփի, զնջիլի և ջօլօբի տիրոջ հաշվին։

Սերմացուն փոխ առնել չէր կարելի։ Պետք էր անպատճառ փողով գնվեր։ Միայն սերմով մասնակցել նույնպես թույլ չէր տրվում։ Անպատճառ պետք էր աշխատանքով ևս մասնակցել, թեկուզ որպես թօխրատու։

---

4 Սիսիանում՝ կանդրիվ։

5 Արծվանիկում՝ ըմբլա։

6 Բռնակոթ։

7 Արծվանիկ։

8 Լեռնային Ղարաբաղ։

9 Կապան։

10 Իսկ եթե գութանով էին վարում, գութանին հաշվում էին 6 օր (մաճկալավ), մեկ եզանը՝ մեկ օր, մեկ մարդուն՝ 2 օր (Բռնակոթ)։